բարձանց վերայ կայ. ընդ մէջ Բասենոյ և Ալաշկերտի, ուր եղաւ 77 թուի ռուս-թուրքական մի մեծ ընդհարումն և բաղմաթիւ կոտորած.

Խաղեազի ի յարևմուտս վերջաւորութեան վրայ՝ կան նաև երկու կիրճեր—Գարա-Ցերպենտ, որ մերձ է Ցէյլիբաբա գիւղի, ուստի գլուխգ դուրս որ հանեցիր, Բասեան առջև կը պարզուի, երկրորդն է սորա 2 ժամ հարաւն Եազլի դաշի կիրճն, ուստի կանցնի Կարնոյ մի այլ ճանապարհն, որ կարճ է, սակայն դժուարանցանելի:

2, Հաճի կեռուկ որ Խաղեազի ի հիւսիս արևելս և Սուկաւէտի ի հիւսիս արևմուտ երկարացած երեսին վերայ կայ, ուստի կանցնի Ռուսական սահմանը ի հիւսիս:

3, Ղօփուզայ կեռուկ, որ Ղուփուզ գիւղի հիւսիսային բարձանց վերայ, Սուկաւէտի արևելեան հիւսիսային կողերուն վերայ կայ, ուստի անցնելու է Կարս գնալու համար Խնուսայ արևելեան մասէն, Պուլանխէն և Անդափէն եկող և Ալաշկերտի դաշտի արևմտեան մասի միջեն անցնող ճանապարհորդներն, որք Բրճօյէն և Ղլիճ կեռուկէն դաշտս մտած էին:

4, Բրճօի կեռուկն որ Շեռեանայ գլխու հարաւն է. ասոնք անցնելու է ի Խնուս և յԱնդափ գնալու համար:

5, Ղլիճ կեռուկ որ յարևելս է Բրճօի կեռուկին և ուղղակի հարաւ Ալաշկերտի դաշտին, մեծ անցքը այս է, ասոնք կը մտնին դաշտս Պուլանխէ, Մշէ, Մանազկերտէ և Անդափէ եկող ճանապարհորդք և Ղօփուզով կանցնեն ի Կարս, Կաղզուան ելն:

6, Կեռռի կեռուկ, որ Կեռռէ լեռան և Մուրատ գետի միջի անցքն է, Գարաքիլիսէի դուռն է, ուստի